

**ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆ ՓԱՍՏԱԲԱՆԻ ՀԵՏ
ՆԵՐԿԱՅԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածից է բխում անձանց իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը: Սահմանադրական այս իրավունքն ամրագրվել է մի շարք օրենքներում, այդ թվում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում:

Քրական դատավարությունում անձանց իրավաբանական օգնություն ստանալու իրավունքն արտահայտվում է մի քանի եղանակներով, որոնցից է նաև հետաքննության և նախաքննության մարմին փաստաբանի հետ ներկայանալու իրավունքը:

Հետաքննության և նախաքննության մարմին ներկայանալը կարող է պայմանավորվել այդ մարմինների կողմից օրենքով սահմանված կարգով իրականացվող քննչական կամ դատավարական գործողությունների իրականացմամբ, որի ընթացքում հրավիրված անձանց մի խումբ իրավունք է ստանում ներկայանալ փաստաբանի հետ:

Այսպես. օրինակ՝ քրեական գործով վկան, ստանալով քննիչի կողմից ուղարկված ծանուցագիրը հարցաքննության կանչվելու մասին, կարող է այդ մարմին ներկայանալ փաստաբանի հետ և հարցաքննվել փաստաբանի ներկայությամբ:

Փաստաբանի հետ ներկայանալու իրավունք ունեն նաև տուժողը, քաղաքացիական հայցվորը և պատասխանողը:

Կասկածյալը կամ մեղադրյալը իրավունք ունեն հետաքննության և նախաքննության մարմին ներկայանալու փաստաբանի /պաշտպանի/ հետ: Նրանց այդ իրավունքը ներառում է նաև փաստաբանի մասնակցությամբ հարցաքննվելու իրավունքը, ինչպես նաև փաստաբանի ներկայությամբ քննչական կամ դատավարական գործողություններին մասնակցելու իրավունքը: Որոշ դեպքերում փաստաբանի մասնակցությունը կրում է պարտադիր բնույթ և վարույթն իրականացնող մարմինը կրում է պարտավորություն ապահովել փաստաբանի մասնակցությունը, օրինակ՝ երբ կասկածյալը կամ մեղադրյալը ժամկետային զինծառայող է:

Ամեն ինչ շատ ավելի դյուրին է երբ քրեական դատավարության օրենսգրքով նշված է, թե համապատասխան կարգավիճակ ունեցող անձանցից ովքեր ունեն իրավունք հետաքննության և նախաքննության մարմիններին ներկայանալ փաստաբան հետ, սակայն այլ հարց է, երբ այդ մարմիններ տարված անձինք չունեն դեռևս կարգավիճակ:

Դատական պրակտիկան ցույց է տալիս, որ դեպքերը բազմակի են, երբ անձիք ոստիկանության բաժիններում են գտնվել առանց համապատասխան հիմքերի և կարգավիճակի, որը զրկել է վերջիններիս հրավիրելու փաստաբանի՝ իրավաբանական օգնություն ստանալու համար: ՀՀ վճռաբեկ դատարանն այս

արատավոր պրակտիկան հաշվի առնելով սահմանեց, որ նույնիսկ կարգավիճակ չունեցող անձը նախաքննության և հետաքննության մարմին կարող է հրավիրել իր փաստաբանին կամ որ նույնն է ներկայանալ փաստաբանի հետ, որը բխում է ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածից:

Հայտնի է, որ փաստաբանի հիմնական առաքելությունը օրենքով չարգելված բոլոր միջոցներով անձանց իրավունքների պաշտպանությունն է, իսկ քրեական դատավարության օրենսգիրքը որևէ մեկին չի արգելում հետաքննության կամ նախաքննության մարմին ներկայանալ փաստաբանի հետ, ուստի բոլոր այն անձիք, որոնք կարիքը կունենան ներկայանալու այդ մարմիններ իրավունք ունեն ներկայանալու փաստաբանի հետ իրենց իրավունքները լավագույնս պաշտպանելու համար:

Հայկազ Գալստյան

*ՀՀ փաստաբանների պալատի
երիտասարդական խորհուրդ*